

չը հասկացուեց և ասորերէն լաւ չէր արտայայտուած: Եւ ասորիները, որքան եւ նկատել եմ, անկարող էին Կոստանդնուպօսլի ետեից գնալ: Քաղկեդօնի օրթոդոքսութեան տեսակէտով նրանք բոլորը հերետիկոս դարձան: Ռաբբուլայի մահից յետոյ 495 թ. դժուար գտնէիք ասորերէն խօսող քրիստոնեաների համայնք, որ Բիւզանդական եկեղեցու հետ միութիւն պահած լինէր: Պարսից իշխանութեան տակ ապրողները համարեա բոլորն էլ Նեստորական էին, Հռովմայ կայսերութեան տակ ապրողները՝ միաբնակ: Ռաբբուլայի կառուցած շէնքը նրա յաջորդների ձեռքով քանդուեց. և քրիստոնէական եկեղեցու արտաքին միութիւնը արեւելքում կտոր կտոր փուլ եկաւ, և էլ երբէք մի ամբողջութիւն չձուլուեց: Քարգ. ռուս. Յուսիկ Արքեպ.

### Ս. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ\*)

#### 9.

Ազնիւ բարեկամ,

Շնորհաւորում եմ Ձեր նոր բնակարանը, մատուցանելով Ձեզ բարեկամական աղուհաց իբրեւ նշան իմ առ Ձեզ սիրոյ և յարգութեան, որով միշտ անփոփոխ մնամ, ամենայն բարեմաղթութեամբ,

24 Հոկտ. 71.

Ձեր Ս. Նազարեանց

Մոսկուա.

#### 10.

Ազնիւ եղբայր Մելքոն,

Այսօր Քո սիրելիքը և ես նոցա հետ տօնում ենք Քո արքայական անուանակոչութեան տօնը. եւ իմ սիրտը այս ընդհանր խորքից շարժուած է: Ո՛հ, այն ցանկութիւնը, որ Քո բարեկամը միշտ անուցած է իւր սրտի մէջ, որ և այսօր կամի արտայայտել խօսքով, թող հասանի զէպ ի պսակ կատարման. այսուհետեւ պիտի վերանուիրուի իմ բերանից գոհութիւն և փառաբանութիւն առ Ամենաբարձրեալը:

Քարնան պէս ծլի ու կանաչի ուրախութեամբ քո կեանքը, ով իմ պատուամեծար Բարեկամ. մի պահապան հրեշտակ թեալկելով հովանաւորէ Քեզ. երբէք չնեղուի ցաւով Քո ազնիւ սիրտը. ոչ. պարզ ու պայծառ, որպէս այսօր, միշտ անթուղպ մնայ Քո երկինքը:

\*) Տես «Արարատ» 4946 թ. սեպտեմբ.—հոկտեմբ. եւ նախորդ համարները:

Քո բոլոր ճանապարհների վերայ, անմեկնելի հետևի Քեզ բաղդը, առաջնորդ լինելով Աստուծոյ հայրական ձեռքը. Քեզ ծաղկի տնոդապէս բարորութիւն և օրհնութիւն մինչև զերեզմանի ծաղկազարդ եզերքը. յետոյ, շատ յետոյ կոչէ զՔեզ մահը դէպ ի միւս կեանքի առաւօտու վարդակարմիր արևածագը:

Դարձեալ և կրկին թող նորոգուի այս Քո տօնը, պատուական եղբայր. ապրիւր Դու տակաւին երկար: Շնտ զարուններ բացունի Քեզ դեռ ևս, լցուցանելով Քո սիրտը երանութեամբ. միշտ նոր ու նոր ջերմութեամբ վառուիս Դու դէպ ի քո պարտականութիւնը և պաշտօնիդ հաւատարմութիւնը:

Եւ ինձ, Քո բարեկամիդ, շնորհէ Աստուած տակաւին քանի մի օրեր վայելել Քո քաղցր մօտակայքում. Հաւատա՛ ինձ, որ իմ բերանի խօսքը անկեղծ ձայնակից է այս ցանկութեանը, որ շնորհակալութեամբ շարժոււմ է իմ սրտի մէջ, որ այսօր կրկնապատիկ ուրախութեամբ բարախում է:

Քո Ստեփանոս Նազարեանց.

Յունուարի 1873 թ.

Մոսկուա:

## II.

Արքայաճուն Մեղքոմի

Իւր հարազատ մտերմի

Շնորհաւորէ զանուան տօն,

Օրեր սիրուն մաղթելով

Ձեր բարեկամ հինաւուրց

Ստեփանոս Նազարեանց.

Ի Յունուարի 1879

Ի Մոսկուա.

Ժողով վաճառականների ի Մոսկվա.

(Առաջարկութիւն, план).

Ամենայն վաճառական նախ և յառաջ բանական մարդ է և ընկեր մարդկային հասարակութեան. ուրեմն առանց դաստիարակութեան և կրթութեան ոչ թէ միայն կարող չէ նա հասանել մարդկութեան պարզուղիղ նպատակին, որ է լինել խոհական և դատող անձն, հասկացող իւր մարմնաւոր և հոգեղէն բարին, այլ և կարող չէ նա լինել մի արժանաւոր վաճառական, մի յաջողակ, խելացի գործակատար մարդ վաճառականութեան ասպարէզի մէջ: Սորանից ինքն ըստ ինքեան հետեւում է, որ ինչքան մարդս իմացականապէս ու բարոյապէս կատարեալ է, ինչքան առողջապէս նա

ուսել է մտածել և դատել աշխարհիս բաների վերայ, նոյնքան ևս պիտոյ է լինի բանիմաց և աջողակ իւր առուտուրքի մէջ իւր ընկերի հետ, թող այդ առուտուրք լինի մի վաճառաշահութիւն կամ թէ մի այլ տեսակ հաղորդակցութիւն: Կայ առուտուրք նիւթական վաճառաշահութեամբ, կայ վաճառաշահութիւն և մտքով ու դատողութեամբ, այն տեղ, ուր մարդիկ կազմում են մի հասարակութիւն. մինը առանց միւսին յառաջադէմ չէ, բայց մինը միւսի օգնութեամբ միշտ բերում է մեծամեծ օգտակարութիւնք և բարութիւնք մարդկութեանս:

Մեք Հայերս մի վաճառական ժողովուրդ ենք. ուրեմն, եթէ այս բոլորիս մտածելով մեր կեանքի առաւել մօտիկ, ամենահարկաւոր խնդրի վերայ, հարցնենք ինքներս մեզանից, թէ ինչպէս պէտք էր յառաջադէմ կացուցանել մեր Հայերիս վաճառական առուտուրքը այն օտարազգի հասարակութեան հետ, որի հետ կապել է մեզ նախախնամութիւնը,—ապա իսկոյն կը տեսնենք, որ հարկաւոր էր Հային թէ մի ընդհանուր և թէ մի մասնաւոր վաճառական կրթութիւն. բայց Հայը երկուսից ևս զուրկ է, իբրև մարդ, շատ պակասաւոր է նա եւրոպացի մարդուց. իբրև վաճառական, իւր օրում լսած ևս չէ այն գիտութիւնների անունը, որ հարկաւոր էին մի վաճառական մարդու, եթէ կամէր նա տալ իւր գործին մի փոքր մեծ ասպարէզ, և լայնացնելով իւր առուտուրքի չափը, վաստակել և մեծ հարստութիւն:

Վաճառականութիւնը հիմնած է երկրագործութեան և բնութեան բերքերի պիտառութեան վերայ, ուստի կարող են յառաջանալ գործատուներ և ֆաբրիկայք պատրաստելու զանազան ապրանք, և վաճառական ընկերութիւնք: Մեր Հայերիս վաճառականութիւնը լինում է գնելով և ծախելով, որին ասում են կրաւորական վաճառաշահութիւն *пассивная торговля*, ուրեմն նա չէ ծնուցիչ և արտադրիչ վաճառականութիւն, *производительная торговля*, *фабрикация*: Մեք Հայերս չունինք ոչինչ չտշուետունք (կօնտորներ) օտար աշխարհներում. մեր գործերի շատ մասը լցուցանում են օտարազգիք, ֆլասելով մեզ, որովհետեւ մեր ազգից պատրաստուած չեն գործակատար մարդիկ օտար աշխարհների մէջ:

Ի՛նչ է այս ցաւելի պակասութիւնների պատճառը:

Մեք Հայերս պակասամիտ մարդիկ չենք. բայց չունինք կրթութիւն, անդաստիարակ ազգ ենք. լուսաւորութիւն չկայ մեր մէջ, մեք փախչում ենք ուսումից, ուրեմն և նստած կանք մութի մէջ: Այսպիսի դրութեան մէջ մեք ամենքեանքս թշնամի ու չաբեացակամ ենք միմեանց, վախում ենք միմեանցից, հաւատ չունինք դէպ իրարու հաւատարմութիւնը, որովհետեւ խաւար ու խարդախ մարդիկ ենք: Այս պատճառով անա մեր Հայերիս վա-

ճառականութիւնը մնացել է մինչև այսօր մի աննշան, չնչին բան, բայց Եւրոպացոցը օրէ օր ծաղկում է, բարգաւաճում է և ստանում է մեծամեծ օգուտներ:

Մեր Հայոց վաճառականութեան հազար ու մի տեսակ ցաւերը մի հատ դեղով և մի օրի մէջ բժշկել ու փարատել, անհնարին է. մեզ այս րոպէիս հարկաւոր է միայն մտածել թէ ինչ ճանապարհով կարելի էր փոքր ի շատէ լաւացնել մեր ներկայ դրութիւնը, մի փոքրիկ հիմք ձգել գալոց օրերի բաղդաւորութեան համար: Այդ ճանապարհը և այդ հիմքը այսօր լինելու էր, եթէ մեր բարեմիտ հասարակութիւնը Մոսկվայի մէջ ժամանակ առ ժամանակ որպէս ժողով հաւաքվէր մի տեղ, մտածելու իւր առեւտրական գործերի բարեկարգութեան վերայ, պարապէր ընթերցանութեամբ այնպիսի օրագրերի ու գրքերի<sup>1)</sup> որ թէ ընդհանրապէս և թէ վաճառականի համար մասնաւորապէս օգտակար ու լուսաւորող էին: Հայոց վաճառականքը ընկերական ընթերցանութեամբ և դատողութեամբ միմեանց հետ կը կրթեն ու կը լուսաւորեն իւրեանց անձը, թէ իւրեանց վաճառականութիւնը խելացի կերպով յառաջ տանելու և թէ ընկերսիրութեան ու բարեացակամութեան հոգին իւրեանց մէջ մշակելու և ծաղկեցնելու համար: Հայը ազնուացնելով իւր անձը որպէս մարդ, կը լինի և ազնիւ պատուելի վաճառական. Հայ վաճառականը ստանալով իւր համար օգտակար տեղեկութիւնք և ծանօթութիւնք վաճառականութեան մասին, կը դառնայ և ազնիւ պատուելի մարդ:

Որովհետև ամենայն մարդկային ժողով, որ յառաջանում է մի բարի խորհրդով, պէտք է ունանայ մի քանի առաջնորդող կանոններ, մի քանի խօսող և առաջարկող նախապատիւ անդամներ, այլ և մի քանի արտաքին կարգեր և պայմաններ, որոնց պարտ է ստորագրել իւր անձը ամենայն ոք, որ կամենում է մասնակից լինել այդ ժողովին, վասնորոյ հարկաւոր է երևում կարգել հետեւեալ գլուխներս.

### Գլուխ 1.

Ամենայն ցանկացող լինելու ժողովի անդամ պարտական է վճարել ժողովի գանձարանին 15 մանէթ որպէս տարեկան տալիք, թէև այդ անձը լինելով եկաւոր մարդ Մոսկվայի մէջ, մնալու էր այն տեղ մի անորոշ ժամանակ. բայց և հեռանալով Մոսկվայից

1) Սորա կարող են լինել Հայերէն եւ Ռուսերէն, Ռուսաստանի մէջ կամ այլ տեղերում տպած. Թէ ինչ օրագիրք կամ գրեանք Հայերէն եւ Ռուսերէն պէտք է գործ դրվէին ժողովի մէջ, այդ մասին առաջարկութիւն կը լինի հասկացող մարդերի կողմից:

պահում է անդամակցութեան իրաւունքը մի տարի. բայց եթէ կամենար աւելի երկար վայելիլ այդ իրաւունքը, ապա պարտական էր տարուց տարի հասուցանել ժողովի գանձարանին յիշեալ տարեկան հասուցանելիքը:

### Գլուխ 2.

Մինչև 1-ը Յունվարի 1861 թուականի ընկերագիր դարձող անձինք հասուցանելով 15 մանէթ տարեկան վճար, պիտոյ է յիշուին ժողովի հիմնադիրք. իսկ 1861 թուականի Յունվարի 1-ից սկսած ընկերագիրքը կը յիշուին լոկ անդամք. բայց եթէ ցանկանար մի ոք ընդունվել ի շարս հիմնադիրների, այնուհետև պարտ էր վճարել կրկնակի, այսինքն 30 մանէթ:

### Գլուխ 3.

Ժողովի հիմնադիր անդամներից պիտի ընտրվին 4 մարդ հոգաբարձու զանազան քաղաքներից, այսինքն Աքուլիս, Շուշի, Թիֆլիս և Մոսկվա քաղաքների բնակիչներից: Սոցանից մինը թող կարգվի գանձապետ, ժողովի հաշիւները պահպանելու համար: Հոգաբարձուքը պարտ են ժողովի մէջ հղած արժաթագլխից հոգալ միայն ամենահարկաւոր պիտոյքը. հոգալի բաները պիտի հոգացվին սոցա ձեռքով: Մնացեալ արժաթագլուխը կը պահպանվի շահեցնելով, որպէս բարոք կը համարեն հոգաբարձու անդամքը. բայց նոքա ամենայն տարի պարտական են հաշիւ ցոյց տալ ժողովին, և եթէ պակասութիւն պատահի ժողովի գանձից, պատասխանատու են յիշեալ 4 հոգաբարձուքը հաւասարապէս: Այլ քաղաքներում գտանված անդամներին պէտք էր նոյնպէս տեղեկութիւն տալ, թէ ինչպէս էր ժողովի գանձի դրութիւնը:

### Գլուխ 4.

Ամենայն անգամ ժողովի իրաւունք ունի մի անգամ բերել իւր հետ մի ծանօթ կամ բարեկամ անձն, բայց երկրորդ անգամ, առաջ ժողովի հաւանութեան չունի համարձակութիւն բերելու իւր հետ միևնոյն անձը: Ամենայն օտարական, որ կամէր ընդունվիլ որպէս անգամ ժողովի, կարող չէր այլապէս ներս մտանել, եթէ ոչ Հիմնադիր անդամներից մինի առաջարկութեամբ և լցուցանելով անգամակցութեան պայմանքը: Ժողովը ունի իրաւունք հոգաբարձուների հաւանութեամբ պատուրիլ հկաւոր կամ Մոսկվայի մէջ բնակող անձինք հրաւիրել ներկայ գնանվել իւր մէջ, և այդ մասին ժողովը պիտի ունենայ տպած զեղիցիկ հրաւիրական տոմսակներ, ստորագրութեամբ հոգաբարձու անդամների:

## Գլուխ 5.

Ժողովի մէջ քաղաքավարութիւնը և պատուադրութիւնը միմեանց զլիսաւոր պայման է խօսքի և վարեցողութեան միմեանց հետ: Ով ինչ բանի վերայ կամի խօսել և պահանջումէ ժողովի ուշադրութիւնը, պարտական է իւր խօսելիքը յառաջուց լաւ մտածել և կշռել. պատճառ, անմիտ շատախօսութիւնը ձանձրոյթ պիտի պատճառէ խոհական լսողին. ունայն պատուասիրութիւնը հեռի պիտի մնայ. հարուստ ու աղքատ ժողովի մէջ հաւասարապատիւ են, բայց խելքին և հասկացողութեանը կը վայելէ գերազանցութիւնը: Ամենայն ոք ունի իրաւունք համեստութեամբ յառաջ բերել իւր կարծիքը և համբերութեամբ ականջ դնել իւր պատասխանատուին: Անձնական դատողութիւնք, կամակորութիւն և վիճասիրութիւն պիտի հեռի մնան: Երբ որ ժողովի անդամներից մինը հրապարակով խօսում է մի հարկաւոր նիւթի վերայ, միւսերը պարտական են լսել առանց կտրելու նորա խօսքը. ամենեքեան միասին խօսել չունին համարձակութիւն, որովհետեւ այդ կը լինէր մի խառնիճադանջ և ոչ թէ բանական մարդերի ժողով: Ընթերցանութիւնը—եթէ մեծ էր ժողովը, կարող է երկու կամ երեք սենեակների մէջ առանձին սեղանների վերայ կատարվի. այդ միջոցին պիտոյ է թագաւորէ հանդարտութիւն և ուշադրութիւն. խօսել կամ ծիծաղել, տեղից վեր կենալ և խառնակութիւն գործել, չկայ թոյլտուութիւն:

## Գլուխ 6.

Ժողովը լինելով մի բարոյական, բարեխորհուրդ միաբանութիւն, ունի և արտաքուստ հսկել իւր անդամների բարեբարոյութեան և անարատ ընթացքի վերայ նոցա արտաքին գործերի և առուտուրքի մէջ: Նախանձ ու չարեացակամութիւն և ֆրասողութիւն միմեանց վաճառական գործի մէջ, թող ամենևին հեռու մնան, որովհետեւ ժողովի խորհուրդն ևս այն է, որ Հայոց վաճառականքը ազնուագործեն իւրեանց սիրտը և հոգին, որ բարեկարգեն իւրեանց վաճառականութիւնը օտար ազգի հետ, մինը միւսին բարի և անխարդախ խորհրդակցութեամբ, ձեռնտու և օգնական լինելով իւր ընկերի օգտին, իւր ընկերի ֆլաւսը և շահը համարելով իւր յատուկը: Այս բաների մէջ պարտական գտանվածների վերայ, ժողովը իշխանութիւն ունի հրապարակական դատաստան կատարել, երեք անգամ զգուշացնելով և խրատելով այդպիսի յանցաւորքը. ապա, եթէ խրատը և յանդիմանութիւնը անպտուղ մնաց, պատժել այդպիսիքը, արտաքսելով ժողովի ընկերութիւնից

և հրաժարվելով ամենայն մասնակցութիւնից նորա հետ, թէ դուրսումը և թէ հասարակութեան մէջ: Դատաստանական կարգով վէճու կոխ Հայերի մէջ գտանելու են նոյն պատիժը ժողովի դատաւճռութեամբ:

### Գլուխ 7.

Եթէ ժողովը, 10 տարին դեռ ևս չլրացած, զանազան պատճառներով, Տէր մի արասցէ, խափանվի, յայնժամ ժողովի գանձը պիտի բաժանվի հիմնադիր մարդերի քաղաքների օգտի վերայ. այսինքն եթէ դոքա բաղկանում էին 4 կամ 5 քաղաքներից, բաժանվի նոյնքան մասն և հասուցանվի այս և այն քաղաքի ժողովրդին, ստանալով նորանից վկայական թուղթ 10 մարդու ստորագրութեամբ, որ այդ արծաթը գործ կը դնէին իւրեանց քաղաքում ազգօգուտ բաների վերայ: Իսկ եթէ ժողովը 10 տարուց յետոյ խափանվի, յայնժամ նորա բոլոր արծաթը պիտոյ է գործածվի կամ մի ուսումնարան բանալու Մոսկվայի մէջ Հայոց աղջիկների դաստիարակութեան համար, կամ թէ մի երեւելի օգտակիր գիրք տպելու Հայոց Ազգի դաստիարակութեան համար, զոր օրինակ մի ընդհանուր լիակատար պատմութիւն, կապակցելով դորա հետ և հարկաւոր դիտելիքը ընդհանուր աշխարհագրութիւնից: Այս գործերի հոգաբարձութիւնը կը յանձնվի Ռուսաստանի մէջ եղած երկու յայտնի բանիմաց և ազգասէր ուսումնականների խորհրդակցութեանը Մոսկվայի կամ Պետերբուրգի Հայերից:

### Գլուխ 8.

Ժողովը, մինչև նրա գանձը հասած չէր 10,000 մանէթի, չունի իրաւունք գործ դնելու նորան ազգօգուտ բաների վերայ, բաց ի իւր համար հարկաւոր եղած մանր ծախքերից, զոր օրինակ բնակութեան, գրքերի, օրագրերի, սեղանների, պահարանների և այլ այսպիսի պիտոյքի:

### Գլուխ 9.

Ժողովը պիտոյ է օրէ օր յառաջագէմ լինի իւր բարեկարգութեան և բարեշինութեան մէջ. ուրեմն ժողովի հոգաբարձու անդամքը ժամանակ առ ժամանակ, միտ դնելով հարկաւորութեան և ժողովի օգուտներին, կը լրացուցանեն այս սահմանադրութիւնքը ուրիշ օգտակար յաւելուածներով, և այս մասին առաջարկութիւն կառնեն պատուելի ժողովին:

Յ. Տէր Յակովբեանց.